

ПОЛИТИКА

Իրանական միջուկային խնդրի ազդեցությունը ԻԻՀ ներքադարական իրադրության վրա ՄԱԿ ԱԽ պատժամիջոցների համատեքստում

Պետրոսյան Լ. Ռ.

*Երևանի պետական համալսարան, արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ախագ լաբորանտ, դասախոս (Երևան, Հայաստան)
lianpetrosyan@yahoo.com*

Քանակի բառեր. Մ. Ահմադինեժադ, Ա. Խամենեյի, Իրանի Իսլամական Հանրապետություն, ներքադարական իրադրություն, միջուկային ծրագիր, պատժամիջոցներ, տնտեսություն, ՄԱԿ ԱԽ, ԱՄՆ, բանակցություններ, բանաձևեր

Влияние ядерной проблемы Ирана на внутривнутриполитическую ситуацию при в контексте санкций СБ ООН

Петросян Л. Р.

*Ереванский государственный университет, факультет Востоковедения, кафедра Иранистики, старший лаборант, преподаватель (Ереван, Армения)
lianpetrosyan@yahoo.com*

Аннотация. История ядерной программы Ирана уходит корнями в 1950-е годы, когда стремление к ядерному потенциалу было обусловлено соображениями обороны, стратегии и безопасности, а также стремлением Ирана стать региональной сверхдержавой. В статье мы рассмотрим влияние ядерной программы Ирана и санкций Совета Безопасности ООН на внутреннюю политику и экономику Исламской Республики Иран, что поможет понять взаимосвязанные отношения между экономическим и внутривнутриполитическим развитием во время президентства Махмуда Ахмадинежада.

Ключевые слова: М. Ахмадинежад, А. Хаменеи, Исламская Республика Иран, внутривнутриполитическая ситуация, ядерная программа, санкции, экономика, СБ ООН, США, переговоры, резолюции.

The Influence of the Iranian Nuclear Problem on the Internal Political Situation of IRI in the Context of UNSC Sanctions

Petrosyan L. R.

*Yerevan State University, Faculty of Oriental Studies, Department of Iranian Studies, department senior assistant, lecturer (Yerevan, Armenia)
lianpetrosyan@yahoo.com*

Summary. The history of Iran's nuclear program dates back to the 1950s, when the pursuit of nuclear capabilities was driven by considerations of defense, strategy and security, as well as Iran's desire to become a regional superpower. In this article, we will consider the impact of Iran's nuclear program and UN Security Council sanctions on the domestic politics and economy of the Islamic Republic of Iran, which will help to understand the interrelated relationship between economic and domestic political development during the presidency of Mahmoud Ahmadinejad.

Key words: M. Ahmadinejad, A. Khamenei, Islamic Republic of Iran, internal political situation, nuclear program, sanctions, economy, UN Security Council, USA, negotiations, resolutions.

Իրանի միջուկային հնարավորությունները արդեն մի քանի տասնամյակ է ինչ գտնվում են միջազգային հանրության և համաշխարհային քաղաքականության օրակարգում: Իրանի միջուկային ծրագրի պատմությունը սկսվում է 1950-ական թվականներից՝ որպես Մոհամմադ Ռեզա շահ Փահլավի հավակնոտ քաղաքականության արդյունք: Իսլամական հեղափոխությունից հետո գործող իշխանությունների՝ միջուկային կարողություն ձեռք բերելու ձգտումը պայմանավորված էր դրա ռազմավարական և

անվտանգային նկատառումներով, ինչպես նաև տնտեսության զարգացմանն ուղղված ընդհանուր միջոցառումների շրջանակներում, որը մեծապես տուժել էր 1980-1988 թթ. Իրանա-իրաքյան պատերազմի և տնտեսական պատժամիջոցների արդյունքում:

Հոդվածում քննության կառնենք Իրանի միջուկային ծրագրի և ՄԱԿ ԱԽ պատժամիջոցների ազդեցությունը Իրանի Իսլամական Հանրապետության ներքին քաղաքականության ու տնտեսության վրա, ինչը կօգնի հասկանալ

Մահմուդ Ահմադինեժադի նախագահության շրջանում տնտեսական և ներքաղաքական զարգացումների միջև փոխկապակցված հարաբերությունները:

Մ. Ահմադինեժադի նախագահության շրջանում նույնպես, Իրանի միջուկային ծրագիրը շարունակում էր մնալ իրանական ներքին և արտաքին քաղաքականության անբաժան մասը: Հարկ է նշել, որ այն առաջընթացը, որն Իրանը ձեռք բերեց միջուկային ծրագրի ոլորտում և որը մտավախություն առաջացրեց մեծ տերությունների, միջազգային հանրության, ինչպես նաև Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից՝ պայմանավորված էր միջուկային ծրագրի շուրջ Մ. Ահմադինեժադի ներքին և արտաքին քաղաքականության շեշտադրմամբ:

Մ. Ահմադինեժադի՝ նախագահության ստանձնման և իրանական քաղաքական ասպարեզում նրա գլխավորած նոր պահպանողականների խմբակցության դերակատարության բարձրացմամբ ազդարարվեց իրանական միջուկային խնդրում արևմտյան պահաջների նկատմամբ իրանական որոշակի առումով «համակերպվողական» և «համագործակցային» քաղաքականության ավարտը, և որպես քաղաքական ուղենիշ որդեգրվեց ճնշումներին հակադրելն ու միջուկային ծրագրի հետագա զարգացման հեռանկարի կարևորությունը՝ անկախ հետևանքներից: 2005-2013 թթ. Իրանն այնքան ընդլայնեց իր միջուկային ծրագիրը, որ դարձավ ատոմակայանի տիրապետող Մերձավոր Արևելքի պետություններից մեկը, դրանով իսկ բարձրացնելով պետության տարածաշրջանային կարգավիճակը¹:

Մ. Ահմադինեժադը իր նախագահության սկզբից բավական կոշտ դիրքորոշում որդեգրեց Արևմուտքի հանդեպ: 2005 թ. մայիսի 25-ին ժնևում տեղի ունեցավ Իրանի ներկայացուցիչների և «Եվրոեռնյակի» (Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա) միջև հանդիպումը: Եվրոպացիները խոստացան իրանցիներին հուլիսի վերջին ներկայացնել Իրանի հետ հետագա համատեղ առաջարկությունները: Սակայն, 2005 թ. օգոստոսի 1-ին Իրանը, չսպասելով «Եվրոեռնյակի» առաջարկություններին, հայտարարեց Սպահանում ուրանի կոնվերսիայի աշխատանքների վերսկսման մասին, իսկ հաջորդ տարի Իրանի նախագահը

հայտարարեց, որ վերսկսում է ուրանի հարստացման գործունեությունը Նաթանգում:

Դեռևս 2006 թ. գերմանական հեղինակավոր «Շպիգել» ամսագրին տված հարցազրույցում ԻԻՀ նախագահ Մ. Ահմադինեժադը, ընդգծելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անդամ լինելու հանգամանքը, փաստում էր, որ ԱԷՄԳ-ի կանոնադրությունը, Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագիրը, ինչպես նաև անվտանգությանն առնչվող բոլոր պայմանագրերը անդամ պետություններին խաղաղ նպատակներով միջուկային վառելիք արտադրելու իրավունք են տալիս: Բացի այդ, Մ. Ահմադինեժադի պնդմամբ ԱԷՄԳ-ն ստեղծվել էր միջուկային զենք ունեցող երկրների զինաթափմանը նպաստելու համար, իսկ Իրանը ոչ միայն չէր տիրապետում միջուկային զենքի, այլև համագործակցում էր ԱԷՄԳ-ի հետ. ավելի քան երկու հազար հանձնաժողովներ ստուգումներով այցելել էին իրանական գործարաններ, տեսուչները դրանց գործունեության վերաբերյալ շուրջ հազար էջանոց հաշվետվություն ներկայացնող փաստաթղթեր էին ստացել, տեսախցիկներ էին տեղադրել միջուկային կենտրոններում [18]: Իր բոլոր հաշվետվություններում ԱԷՄԳ-ն ընդգծել էր, որ խախտումների որևէ փորձ Իրանում չի դիտարկվել [22]: Միջուկային օրակարգի առումով, Մ. Ահմադինեժադին հաջողվեց երկարացնել ԱԷՄԳ-ի հետ բանակցությունների ընթացքը, որպեսզի ժամանակ չափի միջուկային ծրագրերը առաջ մղելու համար: Չնայած միջազգային ճնշումներին, այս ժամանակահատվածում հնարավոր եղավ արագացնել երկու խոշոր ստորգետնյա կասկադային սրահների կառուցումը Նաթանգում, 2006 թ. հունիսին հասնել ուրանի հարստացման գրեթե հինգ տոկոսի, P-2 ցենտրիֆուգների արագացված զարգացման², ծանր ջրերի արտադրության գործարանում շինարարության փուլերի ավարտի, Արաբում ծանր ջրային ռեակտորի արագացման ավարտի և լազերի վերագործարկման Լաշքար Աբադում [14, p. 198]:

Մ. Ահմադինեժադի նախագահության ընթացքում Իրանի միջուկային քաղաքականու-

¹ Բուշերի ատոմակայանը կառուցվել է Բուշեր քաղաքի մերձակայքում: Ծինարարությունը սկսվել է 1975 թ. և շարունակվել 1995 թ.: 2011 թ. սեպտեմբերին առաջին էներգաբլոկը միացել է ցանցին և 2013 թ. հունիսին շահագործման հանձնվել [36]: ԱՄԷ-ի Բարաքի ատոմակայանի շինարարությունը սկսվել է 2012 թ. և գործարկվել է 2020 թ. [37]: Թուրքիայի Ակկոյուլ քաղաքում տեղակայված ատոմակայանի կառուցման աշխատանքները սկսվել են 2011 թ., արդեն 2018 թ. մեկնարկել են բուն շինարարական աշխատանքները [38]:

² Իրանի ցենտրիֆուգի հարստացման ծրագիրը վերջինիս միջուկային ծրագրի ամենավիճահարույց հարթությունն է եղել: IR-1-ը կամ P-1-ը հանդիսանում է ուրանի հարստացման Իրանի շարժիչը: Ավելի քան 15.000 միավոր տեղադրված է Նաթանգի վառելիքի հարստացման գործարանում, իսկ 2710 միավոր՝ Ֆորդոյի վառելիքի հարստացման գործարանում: IR-1-ը Իրանի առաջին ցենտրիֆուգն էր, և հիմնված էր Պակիստանի P-1 ապարատի վրա, որը մատակարարվում էր սև շուկայի ցանցով՝ 1980-90-ականներին: Իրանի ավելի առաջադեմ ցենտրիֆուգների շարքում IR-2m-ը ստացված է Պակիստանի P-2 ցենտրիֆուգից և ենթադրվում է, որ առնվազն չորս անգամ ավելի մեծ հարստացման էր ունի, քան IR-1-ը [39]:

թյունը հանգեցրեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի №1696 (2006) [29], №1737 (2006) [30], №1747 (2007) [31], №1803 (2008) [32], №1835 (2008) [33], №1929 (2010) [34] բանաձևերի ընդունմանը: Այս բանաձևերը հարվածում էին Իրանի տնտեսությանը և ներքին քաղաքականությանը:

ՄԱԿ ԱԽ 2006-2007 թթ. բանաձևերը զգալի ազդեցություն ունեցան ԻԻՀ ներքին և արտաքին քաղաքականության վրա: ՄԱԿ ԱԽ-ն Իրանի նկատմամբ պատժամիջոցների հարցում շեշտը դնում էր այսպես կոչված «խելացի պատժամիջոցների» կիրառման վրա, որն ուղղված էր միջուկային ծրագրի զարգացման և դրա վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում մեծ դերակատարություն ունեցող անձանց և ընկերությունների դեմ [5, c. 7]:

Այսպիսով, 2006 թ. հուլիսի 31-ին ընդունվեց առաջին՝ №1696 բանաձևը: Այդ բանաձևը ուներ հռչակագրի բնույթ և չէր պարունակում որևէ պատժամիջոց: Նրանում պարզապես կոչ էր արվում Իրանին անհապաղ դադարեցնել ուրանի հարստացման աշխատանքները և ամբողջական տեղեկատվություն տրամադրել ԱԷՄԳ-ի աշխատակիցներին, ինչը կնպաստեր Իրանի նկատմամբ վստահության բարձրացմանը [1, էջ 48]: Այս բանաձևի արհամարհումը բերեց մյուս բանաձևերի ընդունմանը, որոնք Իրանի նկատմամբ հանգեցրին ծանր պատժամիջոցների:

Այդ զեկույցի և մի շարք այլ ուսումնասիրությունների ու քննարկումների արդյունքում դեկտեմբերի 23-ին ՄԱԿ ԱԽ-ն ընդունեց №1737 բանաձևը: Հրապարակելով այս բանաձևը ՄԱԿ ԱԽ-ն հաստատեց մի շարք պատժամիջոցներ, որոնք վերաբերում էին Իրանի միջուկային ոլորտի կարևոր օբյեկտներին և սառեցրին այն ընկերությունների հետ համագործակցությունը, որոնք կապված էին Իրանի միջուկային ծրագրի հետ: 2007 թ. փետրվարի 23-ին ԱԷՄԳ-ի տնօրեն Մոհամմեդ էլ Բարադեյը ՄԱԿ ԱԽ-ին զեկույցեց, որ Իրանը ոչ միայն չի դադարեցրել ուրանի հարստացման հետազոտական աշխատանքները, այլև փորձում է մեծացնել Նաթանզի համալիրի հզորությունը: 2007 թ. մարտի 24-ին ընդունվեց №1747 բանաձևը: Արդեն 2008թ. Իրանի նկատմամբ ընդունվեց հերթական՝ №1803-րդ բանաձևը, որտեղ ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրներին կոչ էր արվում հետել ՄԱԿ-ի բանաձևերի իրականացմանը և Իրանի հետ համագործակցության ժամանակ պահպանել դրանք [1, էջ 46-52]:

2009 թ. սեպտեմբերին պարզ դարձավ, որ Իրանի և վեցնյակի³ միջև առաջարկությունների

փաթեթների փոխանակումը Թեհրանը օգտագործում էր ժամանակ ձգելու համար. առանց մեկնաբանության էին մնում նաև ԱԷՄԳ-ի այն անհանգստությունները, որոնք կապված էին ռազմական ծրագրի ոլորտում Իրանի ենթադրյալ հետազոտությունների հետ: Արդեն 2009 թ. աշնանը լուրեր տարածվեցին՝ կապված ցածր հարստացված ուրանի հետ: Մտահոգիչը այն էր, որ նախկինում փորձագետները համոզված էին, որ ուրանի 4% հարստացումը Թեհրանի հնարավորությունների սահմանը չէր [3, c. 32]:

2010 թ. սկզբին Իրանը հանդես եկավ ուրանի 20% հարստացման հայտարարությամբ, ինչի արդյունքում, հունիսին ՄԱԿ ԱԽ-ն, անհանգստանալով Իրանում ուրանի հարստացման աշխատանքներից, ընդունեց №1929 բանաձևը, որը, ի տարբերություն նախորդների, արգելում էր Իրանում արտադրել հրթիռներ և հրթիռային համակարգեր, ուղղաթիռներ և պահեստամասեր դրանց համար: Առավել մտահոգիչը իրանցիների համար Իրանի նավթի և գազի ոլորտում օտարերկրյա ներդրումների արգելքն էր, ինչպես նաև միջազգային շուկայում մի շարք իրանական ձեռնարկությունների գործունեության սահմանափակումը և իրանական որոշ ֆինանսական ընկերությունների հետ ՄԱԿ անդամ պետությունների բանկերի համագործակցության կասեցումը [2, c. 80]: Նմանատիպ տնտեսական ճնշումների, հատկապես իրանական տնտեսության հիմք հանդիսացող նավթագազային ոլորտում դժվարությունների ստեղծման միջոցով փորձ էր կատարվում ստիպելու Իրանին հրաժարվել իր միջուկային ծրագրերից:

Իրանի նկատմամբ պատժամիջոցների ճնշումը իր գագաթնակետին հասավ 2011 թ. վերջին և 2012 թ. սկզբին: 2011 թ. նոյեմբերին ԱԷՄԳ-ն հրապարակեց մի զեկույց, որով փորձ արվեց ևս մեկ անգամ ապացուցել, որ Իրանը պատրաստվում է միջուկային զենք արտադրել: Սրա համատեքստում 2013 թ. ՄԱԿ ԱԽ-ն ընդունեց Իրանի նկատմամբ պատժամիջոցների նոր փաթեթ, որը արգելում էր ԵՄ անդամ երկրներին իրանական գազ մատակարարել:

Այսպիսով, փորձենք առավել մանրամասն ներկայացնել միջազգային պատժամիջոցների հետևանքներն իրանական սոցիալ-տնտեսական և ներքաղաքական իրադրության վրա ու դրանց հաղթահարմանն ուղղված քայլերը:

Սոցիալ-տնտեսական հետևանքներ:

Իրանական տնտեսության վրա միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների

³ P5+1 երկրները պետությունների խումբ են, որոնք միասին աշխատում են Իրանի միջուկային ծրագրի շուրջ: Երկրները ներառում են Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները,

հետևանքները ներկայացնելուց առաջ հարկ է նշել, որ գոյություն ունեւոր տնտեսական պատժամիջոցների երկու տեսակ: Պատժամիջոցների առաջին բլոկը այն պատժամիջոցներն էին, որոնք կիրառվում էին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերով և հիմնականում կենտրոնացած էին այնպիսի ապրանքների կամ ծառայությունների արտահանման և ներմուծման վրա, որոնք կարող էին օգտագործվել Իրանի միջուկային ծրագրի իրականացման ընթացքում: Եվ պատժամիջոցների երկրորդ՝ միակողմանի բլոկը պարտադրվել էր ԱՄՆ-ի կողմից, իսկ մասամբ նաև ՄԱԿ-ի որոշ անդամ պետությունների կողմից, ինչը մեծ վնաս էր հասցրել իրանական տնտեսությանը: Արդյունքում, ԱՄՆ-ին հաջողվեց կանխել բազմաթիվ խոշոր միջազգային ընկերությունների համագործակցությունը իրանական բիզնես հաստատությունների հետ: Օրինակ, եվրոպական շատ խոշոր բանկեր գերծ մնացին իրենց համագործակցությունից իրանական գործարար շրջանակների հետ, ինչը, անկասկած, բացասական ազդեցություն ունեցավ իրանական առևտրի և ներդրումների վրա:

Այսպիսով, պատժամիջոցների առաջին փուլից հետո ԻԻՀ-ԵՄ առևտրի ծավալը նվազեց: Տնտեսական պատժամիջոցները բացասաբար ազդեցին իրանական որոշ բանկերի գործունեության վրա⁴, իսկ գնաճը հատեց 25%-ի շեմը [12, p. 76]: Այս բոլոր հանգամանքները խանգարում էին նաև օտարերկրյա ներդրումներին, որոնք կարող էին նպաստել նավթի արդյունահանմանը և դրա արտահանմանը⁵ [10, p. 3]:

Մ. Ահմադինեժադի նախագահության ընթացքում կիրառված պատժամիջոցների վերջին բլոկը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի №1929 բանաձևն էր: Արդյունքում, երկրում բանկերի գործունեության համար խոչընդոտներ առաջացան, ինչի վրա ազդեցին նաև ԱՄՆ և ԵՄ միակողմանի պատժամիջոցները: Մասնավորապես, 2006 թ. ընթացքում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը հրապարակեց №12957, №12959 և №13059 ակտերը, ըստ որոնց սառեցվում էր Իրանի միջուկային ծրագրի հետ կապված անձանց ակտիվները [16, p. 32]: ԵՄ-ն իր

հերթին, 2012 թ. արգելքներ կիրառեց ԵՄ պետությունների կողմից իրանական ապրանքների և իրանական նավթաքիմիական ապրանքների ներմուծման, գնման և փոխադրման վրա [27]: Այս ճնշումները բացասական ազդեցություն ունեցան Իրանի էներգետիկ և նավթաքիմիական ոլորտների վրա, քանի որ նավթի և գազի արդյունաբերության մեջ օտարերկրյա ներդրումների արգելքը վնասում էր երկրի տնտեսությանը: Եվ այս պատժամիջոցների հիմնական պատճառը Թեհրանի հայտարարությունն էր ուրանի հարստացման 20%-ի մասին:

Համաշխարհային տնտեսական անկման և պատժամիջոցներին զուգահեռ Իրանի տնտեսական աճը 2009-2010 թթ. ընթացքում սկսում է հետընթաց գրանցել: Արդեն 2011-2013 թթ. ընթացքում առևտրի գործակիցները նվազում են մոտ 14-18%-ով, իսկ դա այն դեպքում, երբ 2010-2011 թթ. ընթացքում այն կազմել էր 21% [15, p. 50]:

Ինչպես արդեն գիտենք, Մ. Ահմադինեժադի տնտեսական քաղաքականության կարևոր բաղադրարարներից էր սեփականաշնորհման ծրագիրը: Դեռևս երկրորդ նախընտրական քարոզարշավի ընթացքում հայտարարվեց առաջին բանկերի սեփականաշնորհման մասին և արդեն 2009 թ. առաջին կիսամյակում Թեհրանի ֆոնդային բորսայի միջոցով սկսեցին վաճառվել «Մեյլաթ», «Թեջարաթ» և «Մադերաթ» խոշոր բանկերի բաժնետոմսերի 5-6%-ը: Արդյունքում, 2007 թ. մասնավոր բանկերի բաժնետոմսերի փաթեթները ֆոնդային բորսայում աճեցին 13%-ով 2011 թ. հասնելով 56%-ի: Մասնավոր բանկերը սկսեցին ակտիվորեն մասնակցել միջսահմանային բիզնեսի ֆինանսավորմանը (առևտրի և արտադրության մեջ), սակայն ԱՄՆ և ԵՄ պատժամիջոցները զգալիորեն բարդացրին դրանց գործունեությունը [11, p. 15]: Իրանական բանկերի հետ գործարքների և SWIFT⁶ համակարգում Իրանի մասնակցությունը սառեցնելու արդյունքում Իրանը, փաստորեն, զրկվել էր միջազգային ֆինանսական հաստատություններից և բանկերից ԱՄՆ դուրս գնելու հնարավորությունից, ինչը նվազեցրել էր արտարժույթի հոսքը դեպի

⁴ Մասնավորապես, ԱՄՆ կառավարությունը 2006 թ. արգելեց իրանական Սադերաթ բանկին անգամ անուղղակիորեն գործ ունենալ ԱՄՆ ֆինանսական հաստատությունների հետ: Այս քայլի մասին հայտարարեց գանձապետարանի փոխնախարար Ստյուարտ Լեյվին, որը մեղադրեց Իրանի խոշոր պետական բանկին որոշակի խմբերի, այդ թվում՝ «Հեզբոլլահ»-ի համար միջոցներ փոխանցելու մեջ: Արդեն 2007 թ. իրանական Սեփահ, Սադերաթ, Մեյլաթ, Կարգոշահի և Արիան հետևյալ բանկերին արգելվում էր փոխանցումներ և գործարքներ կատարել Միացյալ Նահանգների բանկերի հետ [40]:

⁵ 2007 թ. մեկ բարելի դիմաց նավթի գինը 5-ից բարձրացավ 63 դոլարի:

⁶ SWIFT-ը անդամակցային կոոպերատիվ է, որը կապի հարթակ, ապրանքներ և ծառայություններ է տրամադրում 210 երկրների ավելի քան 10 000 ֆինանսական հաստատությունների և կորպորացիաների միացման համար: SWIFT-ը թույլ է տալիս իր օգտվողներին ապահով և հուսալիորեն փոխանակել ավտոմատացված, ստանդարտացված ֆինանսական տեղեկատվություն՝ այդպիսով նվազեցնելով ծախսերը, գործառնական ռիսկերն ու վերացնելով դրանց անարդյունավետությունները: SWIFT-ը միավորում է նաև ֆինանսական համայնքին՝ շուկայական պրակտիկայի ձևավորման, չափորոշիչների սահմանման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման շուրջ միասին աշխատելու համար:

երկիր և սահմանափակել առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծումը [17]:

Աճող տնտեսական պատժամիջոցների և Արևմուտքի հետ առճակատման պայմաններում հոգևոր առաջնորդ Ա. Խամենեին 2011 թ. որդեգրեց «Տնտեսական ջիհադի տարի»⁷ կարգախոսը [35]: Նման հայտարարությունը պետք է համարել որպես ֆեթվա, որն ուղղված էր Իրանի ներքին և արտաքին գործունեության մոբիլիզացմանը՝ կապված տնտեսապես զարգացած խոշոր պետությունների՝ երկրի վրա ճնշում գործադրելու հետ: Միաժամանակ պետք է ընդգծել, որ Իրանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների քաղաքականության արդյունքում 2010 թ. ընթացքում տնտեսության որոշ ոլորտներում 2009 թ. համեմատ ան էր գրանցվել, որը պատկերավոր ներկայացվում է ստորև՝

Աղյուսակ 1. 2009 և 2010 թթ. տնտեսական իրադրության ընդհանուր պատկերը [6, c. 29]

	2009 թ.	2010 թ.
ՀՆԱ	1.5%	3%
Գնողունակության ՀՆԱ	838.3 մլրդ. \$	863.5 մլրդ. \$
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ	11.000 \$	11.200 \$
Պետական պարտք	16.8%	16.2%-ի
Արտահանման ընդհանուր ծավալը	69.04 մլրդ \$	78.69 մլրդ \$

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ պահուստային ֆոնդը 2010 թ. նվազեց՝ հասնելով 75.06 մլրդ. դոլարի, իսկ Իրանի արտաքին պարտքը, որը 2009 թ. կազմում էր 12.63 մլրդ. դոլար, 2010 թ. անեց՝ հասնելով 12.84 մլրդ. դոլարի [6, c. 29]:

Արդեն 2012 թ. խստացված պատժամիջոցներից հետո Իրանի տնտեսության բոլոր ոլորտները թիրախավորված էին, երկիրը սահմանափակված էր նավթի վաճառքով: Իրանի Կենտրոնական բանկը և երրորդ երկրների այլ ֆինանսական հաստատությունների գործունեությունը սառեցված էր: Ներմուծման և արտահանման դժվարությունները հանգեցրել էին գնաճի բարձր մակարդակի՝ Իրանի տնտեսության յուրաքանչյուր հատվածում [25]: Գրեթե բոլոր միջազգային ապահովագրական ընկերությունները հրաժարվեցին ապահովագրել իրանական նավթով բեռնված նավերը, ինչը զգալիորեն կրճատեց իրանական նավթի արտա-


հանման ծավալները (մոտ 30%-ով): Խնդիրի էությունն այն էր, որ նույնիսկ այն պետությունները, որոնք չէին պաշտպանում Իրանի դեմ միջազգային պատժամիջոցները, ստիպված էին սահմանափակել իրանական նավթի գնումները, քանի որ դրա տեղափոխումը ապահովագրված չէր և որևէ ֆորսմաժոր լինելու դեպքում գնորդները կարող էին կորցնել ինչպես բոլոր գնված ապրանքները, այնպես էլ դրա դիմաց վճարած գումարը [17]: Այս պատժամիջոցների արդյունքում Իրանը բախվեց իրական մակրոտնտեսական ճգնաժամի և իրանական դրամական միավորի՝ ռիալի անկման:

Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման բոլոր տարիներին կառավարության առջև ծառայած լուրջ խնդիրներից է եղել հասարակության շրջանում գործազրկության մակարդակը, որը, պատժամիջոցների համատեքստում առավել սուր բնույթ էր ստանում: Ինչպես շահական վարչակարգի տարիներին, այնպես էլ հանրապետության շրջանում իշխանությունները դիմում էին արտասահմանից աշխատավորների ներգավմանը այնպիսի ոլորտներում աշխատելու համար, որոնք տեղացիները համարում էին «անպատվաբեր», այդ թվում՝ շինարարության և արդյունաբերության ոլորտները: Միևնույն ժամանակ, շուրջ մեկ ու կես միլիոն իրանցի հանդիսանում էր արտագնա աշխատանքով զբաղվող: Արդեն Մ. Ահմադինեժադի պաշտոնավարման երկրորդ շրջանում, մասնավորապես 2012թ. դրությամբ գործազրկության պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ 2. Գործազրկության ընդհանուր պատկերը 2012 թ. դրությամբ [23]

Տղամարդիկ 15-29 տարեկան	Կանայք 15-29 տարեկան	Տղամարդիկ 29-ից բարձր	Կանայք 29-ից բարձր	Երիտասարդն երի շրջանում ընդհանուր
20.9%	38.3%	10.5%	19.9%	24.5%

Եթե փորձենք ներկայացնել գործազրկության տարեկան ցուցանիշը պատժամիջոցների կիրառումից հետո, ապա կունենանք հետևյալ պատկերը՝



[21]

⁷ Իսլամական ավանդույթների համաձայն, «ջիհադ» բառը նշանակում է ջանք կամ ջանասիրություն ցանկացած գործում, ինչպիսիք են ուսումը, աշխատանքը և այլն: Իսլամական ջիհադը նաև պայքար է մարդու հոգևոր կամ սոցիալական արատների դեմ (օրինակ՝ ստի, խաբեության, հասարակության խեղճության և այլն), սոցիալական անարդարության վերացում, հանցագործների և իրավախախտների պատժի, իսլամի տարածման մեջ անընդհատ եռանդի դրսևորում, ագրեսորների դեմ պատերազմի վարում:

Պատժամիջոցների թողած բացասական հետևանքները մեղմելու և երկրում տնտեսական իրավիճակը կարգավորելու համար կառավարությունը տարատեսակ քայլեր էր ձեռնարկում: Փորձենք նշել դրանցից ամենակարևորները.

1. Քանի որ արևմտյան պատժամիջոցների արդյունքում որոշակի դժվարություններ էին առաջացել իրանական նավթի արտահանման և իրացման հետ կապված, ապա ստեղծված իրավիճակից դուրս գալու համար Իրանը փորձեց օգտվել նավթի «սև շուկայից»: Դրա հիմնական նպատակը նավթի արտահանման այլընտրանքային եղանակների կազմակերպումն էր, ինչը հնարավորություն կտար միջնորդությամբ վաճառել նավթն այն երկրներին, որոնք պաշտոնապես հրաժարվել էին Իրանի հետ համագործակցությունից: Ըստ այդմ, իրանական կառավարությունը իրավունք ընձեռեց նոր զարգացող «կոոպերատիվներին» ինքնուրույն նավթ արտահանել և չտեղեկացնել արտահանման ուղղությունների մասին [17]:

2. Ըստ Իրանի Կենտրոնական բանկի, իրանական նավթային ազգային ընկերությանը 5 միլիարդ դոլար էր տրամադրվել նավթի արտահանման ապահովագրության իրանական ազգային հիմնադրամի ստեղծման համար, ինչը Իրանին հնարավորություն կտար սեփական միջոցներով ապահովել նավթային նավերի անվտանգությունը և խրախուսել նախկին գնորդներին՝ վերսկսել Իրանից նավթի գնման գործընթացը [17]:

3. Արտաքին քաղաքական հարթակում Թեհրանը կանգնել էր նոր գործընկերների փնտրտուքի մարտահրավերի առջև, որոնք կնպաստեին երկրի տնտեսական խնդիրների կազրավորմանը և ճգնաժամի հաղթահարմանը: Դաշնակիցների փնտրտուքն ավարտվեց Հնդկաստանի հետ պայմանավորվածության ձեռքբերմամբ, ըստ որի Հնդկաստանը պետք է ցորեն մատակարարեր Իրանին մատչելի գներով, դրանով իսկ օգնելով խուսափել հացի գների հնարավոր թանկացումից: Պետք է նաև փաստել, որ այդ շրջանում Հնդկաստանը ակտիվ քաղաքական դերակատարություն չունեցավ Մերձավոր Արևելքում, ուստի Իրանի հետ համաձայնագրի կնքումը իրապես հեռանկարային էր երկու կողմերի համար էլ [17]:

4. Պետք է փաստել, որ ներքաղաքական աճող դժգոհությունների համատեքստում կառավարության կարևոր քայլերից էր ներքին արտադրողների շահերի պաշտպանությունը: 2009 թ. հունիսի 17-ի հրամանով կառավարությունը բոլոր պետական ձեռ-

նարկություններին պարտադրեց ներքին կարիքների բավարարման համար օգտվել բացառապես տեղական արտադրանքից [4, c. 173]:

Ներքաղաքական հետևանքներ: Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել դրա նկատմամբ իրանցիների և իրանական դեկավարության վերաբերմունքի, միջուկային ծրագրի զարգացման դրդապատճառների, ներքաղաքական գործընթացների դինամիկայի և այլ հարցերի վրա, որոնք էլ ձևավորում էին Իրանի միջուկային ծրագրի ամբողջ գործընթացը:

Ըստ էության, իրանական իշխանություններին կարելի է դասակարգել մի քանի խմբերի՝ հիմնվելով միջուկային ծրագրի նկատմամբ իրենց վերաբերմունքի վրա.

- Իրանում միջուկային ծրագիր զարգացման հակառակորդներ: Խուսմբը հիմնականում բաղկացած է այսպես կոչված «բարեփոխիչների ճամբարի» ներկայացուցիչներից, ովքեր կարծում էին, որ իրանական միջուկային էներգիայի ոլորտում ներդրումները երբեք չեն փոխհատուցվի:

- Իրանում միջուկային զենքի զարգացման կողմնակիցներ: Այս խմբի ներկայացուցիչները կարծում էին, որ անհրաժեշտ է մշակել միջուկային ծրագիր՝ նավթից կախվածությունը նվազեցնելու և տնտեսության բարձր տեխնոլոգիական արդյունաբերությունը զարգացնելու համար:

- Իրանի միջուկային ծրագրի ռազմական բաղադրիչի կողմնակիցները կոչ էին անում կառուցել գիտական, տեխնիկական և արդյունաբերական հնարավորություններ՝ Իրանի համար հնարավոր ռազմական սպառնալիքի դեպքում միջուկային զենք ստեղծելու համար:

- Նրանք, ովքեր աջակցում էին Իրանի միջուկային զենքի չտարածման պայմանագրից դուրս գալուն և անհասպող միջուկային զենքի ստեղծմանը, կարծում էին, որ ՁՈՁ-ը (զանգվածային ոչնչացման զենքեր) միակ ճանապարհն է, որ Իրանը գոյատևի և բարգավաճի [13, p. 41-42]:

Միջուկային ծրագրի մշակման սկզբնական փուլում իրանական քաղաքական շրջանակները համաձայնության էին եկել միջուկային ծրագրի մշակման վերաբերյալ իրենց իրավունքի և անհրաժեշտության շուրջ: Բայց 2005 թ. նոր նախագահի ընտրությունից հետո Իրանը անցավ միջուկային՝ համեմատաբար նոր մարտավարության, որը նպատակ ուներ միջազգային հանրությանը համոզելու, որ Իրանի նոր իշխանությունները ավելի վճռական են տրամադրված միջուկային տեխնոլոգիաների զարգաց-

ման հեռանկարների շուրջ: Այս մարտավարության բաղադրիչներից էր Հ. Ռոհանիին՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից հեռացնելը և Ա. Լարջանիի նշանակումը: Ա. Լարջանին այն քաղաքական գործիչներից էր, ով կարող էր կայունացնել հարաբերությունները ԻԻՀ-ի, ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի միջև: Բանն այն է, որ Հ. Ռոհանին, ի տարբերություն Ա. Լարջանիի՝ Արևմուտքի հանդեպ առավել մեղմ քաղաքականություն էր որդեգրել, ինչը որոշակիորեն հակասում էր Մ. Ահմադինեժադի շահերին ու հայտարարություններին: Հենց Հ. Ռոհանիի պաշտոնաթողությունից հետո է, որ Իրանը հանդես է գալիս ուրանի հարստացման վերաբերյալ հայտարարություններով: Այնուամենայնիվ, այս նշանակումը ձեռնտու տարբերակ չէր Մ. Ահմադինեժադի համար, մանավանդ նրա նախագահության առաջին ժամկետի ավարտին, քանի որ Իրանի միջուկային խնդիրը և Արևմուտքի հետ լարված հարաբերությունները հասարակության ուշադրությունը կշեղեին ներքաղաքական խնդիրներից և նա կունենար երկրորդ անգամ վերընտրվելու հնարավորություն:

2006 թ. ԱՄՆ-ն ընդունեց «Իրանի ազատության աջակցության մասին օրենքը»՝ ֆինանսական օգնություն առաջարկելով Իսլամական Հանրապետության ներսում և դրա սահմաններից դուրս իրանցի այլախոհներին և լրատվամիջոցներին, որոնք ցանկանում էին հասնել իրանական վարչակարգի խաղաղ վերափոխմանը և ժողովրդավարացմանը [28]:

Իր նախագահության ընթացքում Մ. Ահմադինեժադը հայտարարեց, որ Իրանի միջուկային ծրագիրը անդառնալի իրականություն է, որը բուռն քննադատություն առաջացրեց ինչպես բարեփոխիչների, այնպես էլ պահպանողականների շրջանում: Բայց հիմնականում դա անհանգստացնում էր Իսրայելին, որի նկատմամբ ընդգծված թշնամական դիրքորոշում էր որդեգրել նախագահ Մ. Ահմադինեժադը, ինչպես նաև ԱՄՆ-ին և ՄԱԿ-ին, ուստի Իրանի դեմ նոր՝ միակողմանի պատժամիջոցները հետապնդում էին կարևոր քաղաքական նպատակներ: Այն է՝ կրճատել միջուկային և հրթիռային ծրագրի զարգացման Իրանի հնարավորությունները և իրանական ղեկավարությանը ստիպել շարունակել բանակցությունները Իրանի միջուկային ծրագրի շուրջ [24]: Երկու նպատակներին էլ հասնելու համար նախատեսվում էր սահմանափակել Թեհրանի տնտեսության նավթաքիմիական և նավթագազային արտադրության սեկտորի հնարավորությունները, որոնք հանդիսանում էին իրանական բյուջեի ներհոսքի հիմնական աղբյուրը:

Գոյություն ունեւ երրորդ, քիչ հրապարակված, սակայն մեծ կարևորություն

ներկայացնող հանգամանք ևս, որի նպատակն էր ԻԻՀ ներսում ընդդիմության օգնությամբ փոխել ուժերի դասավորությունը և իշխանության բերել ավելի լիբերալ կերպարի: Միակողմանի պատժամիջոցների թիկունքում կանգնած ուժերի համար առավել ցանկալի տարբերակ կլինեւ երկրում իշխանության ձևի փոփոխությունը: Երրորդ նպատակին հասնելու համար ևս, նախատեսվում էր գործող իրանական իշխանությանը գրկել նավթի արտահանման վաճառքից ստացվող ֆինանսական ներհոսքից և նրանց գրկել արտատնտեսական գործունեության հնարավորությունից [8, p. 5-7, 11-16]: Իրանի ղեկավարները կարծում էին, որ հնարավոր գործողությունները, որոնք կարող էին իրականացվել Արևմուտքի կողմից կհանգեցնեին կողմերի միջև սպորտային և կրթական հարաբերությունների դադարեցմանը, արտասահմանում իրանցի դիվանագետների տեղաշարժի սահմանափակմանը, Իրանի բանկերի հետ փոխգործակցության սահմանափակմանը և իրանական նավթի արտահանման արգելքներին [7, p. 29]:

Հարկ է նշել, որ թե՛ Մ. Ահմադինեժադի կառավարությունում, թե՛ դրան նախորդած շրջանում Իրանում մեծ դերակատարություն ունեւ ԻՀՊԿ-ն, բայց ահա 2009 թ. Նախագահական ընտրություններից հետո արդեն, հասարակության լայն շրջանակներն ու վերլուծաբանները սկսեցին քննարկել այն դերն ու ազդեցությունը, որն ունեւ ԻՀՊԿ-ն իրանական տնտեսական կյանքում: Իրանական ծագմամբ ամերիկաբնակ հայտնի քաղաքագետ և պատմաբան Աբբաս Միլանին, օրինակ, կարծում էր, որ ԻՀՊԿ-ն վերահսկում էր տնտեսության 60%-ը [26], ուստի բոլոր տեսակի տնտեսական պատժամիջոցները կանդրադառնալին այս ինստիտուտի վրա՝ դրանով իսկ հսկայական ազդեցություն ունենալով որոշումների կայացման հետագա գործընթացի վրա:

2006 և 2007 թթ., ի պատասխան ՄԱԿ պատժամիջոցների՝ Մ. Ահմադինեժադը տարբեր առիթներով հայտարարում էր, որ իրանական բանակը ինքնաբավ է և պատժամիջոցները չեն կարող այն թուլացնել՝ նկատի ունենալով, որ պատժամիջոցների հետևանքով տնտեսական ծանր իրադրության մեջ հայտնված Իրանը պատրաստ է դիմակայել հնարավոր պատերազմին: Նա նաև այն երկրներին, որոնք պատժամիջոցներ էին սահմանել՝ որակեց որպես «ահաբեկիչ ուժեր» [9, p. 4]: Փաստորեն, Իրանի նախագահը այս հայտարարությամբ փորձում էր մեղմել երկրի ներսում ծայր առած մտահոգությունները, ինչպես նաև արտաքին ուժերին ուղղակիորեն կոչ էր անում զերծ մնալ հնարավոր պատերազմի սանձազերծումից: Արդեն 2007 թ. օգոստոսի 28-ին Մ. Ահմադինեժադը հայտա-

րարեց, որ Իրանը չի դադարեցնում միջուկային ծրագրի զարգացման հետ կապված աշխատանքները [20]: Ակնհայտ էր, որ միջուկային ծրագրի շուրջ նախագահը համաձայնության էր եկել հոգևոր առաջնորդի հետ և իր բոլոր հայտարարությունները նախապես հավանության էին արժանացել Ա. Խամենեյի կողմից, քանի որ վերջինս, ինչպես և Մ. Ահմադինեժադը, հակված չէր միջուկային ծրագրի հարցում գիջումների:

Ամերիկյան և եվրոպական վերլուծաբանների կարծիքով Իրանի միջուկային ծրագրի հարցում պաշտոնական Թեհրանի դիքորոշումները փոխվեցին՝ կապված «Կանաչ շարժման» հետ [8, p. 3]: Ըստ էության 2009 թ. ամռանը ծագած խնդիրները հանգեցրեցին նրան, որ իրանական ղեկավարությունը թուլացրեց իր դիրքերը և համաձայնեց 2009 թ. հոկտեմբերին կայացած միջուկային վառելիքների փոխանակման պայմանագրին: Արդեն 2009 թ. նոյեմբերին հոկտեմբերյան պայմանավորվածություններից հետո Մ. Ահմադինեժադի հրաժարումը վկայում էր երկրի ներսում նրա դիրքերի ամրապնդմամբ: Բան այն է, որ չնայած Մ. Ահմադինեժադի հետ հարաբերություններում առկա ճաբերին՝ հոգևոր առաջնորդ Ա. Խամենեին «Կանաչ շարժման»⁸ հենց սկզբից աջակցեց նախագահին, ինչն էլ վերջինիս առավել ինքնվստահ դարձրեց: Այսպիսի պայմաններում իրանական միջուկային ծրագրի հետ կապված խնդիրների կարգավորման հարցում Արևմուտքի համար աճում էր ընդդիմադիրների նշանակությունը: Սակայն արդեն 2010թ. հուլիսի վերջին Հ. Ռաֆսանջանին հանդես եկավ հայտարարությամբ, որում պատժամիջոցների կիրառումը բնորոշեց որպես նոր, ագրեսիվ մարտավարության բաղկացուցիչ, որը ԻԻՀ՝ ղեմ օգտագործվում էր իր թշնամիների կողմից: Այս պարագայում, նրա խոսքերով, Արևմուտքին կարելի էր հակադրվել «ակտիվ արտաքին քաղաքականությամբ և ներքին միասնության ապահովմամբ» [4, c. 37-40]: Ըստ էության սա անակնկալ էր նաև Արևմուտքի համար, քանի որ Մ. Ահմադինեժադի հակառակորդները, փաստացի, հայտարարում էին միջուկային խնդրում իշխանություններին սատարելու մասին:

Իրանում 2010 թ. նոյեմբեր ամսվա խոշոր քրեաքաղաքական իրադարձություններից էր 2 միջուկային գիտնականների դեմ մահափորձը, որը կատարվել էր նոյեմբերի 29-ի առավոտյան՝ Թեհրանում: Նրանցից մեկը՝ պրոֆ. Մաջիդ Շահրիարին սպանվել էր, իսկ մյուսը՝ պրոֆ. Ֆերիդուն Աբբասին՝ վիրավորվել: Վիրավորվել էին նաև գիտնականների կանայք: Հատկա-

նշական է, որ իրանական և արաբական լրատվամիջոցները նշում էին, որ Ֆ. Աբբասին լազերային ֆիզիկայի ոլորտի մասնագետ էր, Պաշտպանության նախարարության միջուկային ծրագրերի վրա էր աշխատում, իսկ 1979 թ. հանդիսացել էր Հեղափոխության պահապանների կորպուսի անդամ: ՄԱԿ-ի ԱԽ պատժամիջոցների 1747 բանաձևում առկա էր նաև նրա անունը: ԻԻՀ իշխանությունները մահափորձի մեջ մեղադրեցին Արևմուտքի և Իսրայելի գործակալներին: Երբ տարեսկզբին նմանատիպ պայմաններում սպանվեց հայտնի ֆիզիկոս Մասուդ Ալի Սոհամմադին՝ պաշտոնական Թեհրանը կրկին պատասխանատվությունը դրեց օտարերկրյա գաղտնի ծառայությունների վրա և խոստացավ, որ այս սպանությունը անպատիժ չի թողնի [19]:

Արդեն 2011 թ. լարվեցին իշխանության 3 մարմինների՝ հոգևոր առաջնորդի, նախագահի և խորհրդարանի միջև հարաբերությունները: Հատկապես լարված էին հարաբերությունները նախագահի և հոգևոր առաջնորդի, նախագահի և խորհրդարանի միջև: Կառավարման համակարգի դերակատարների միջև լարված հարաբերությունները կարող էին բարդություններ ստեղծել երկրի քաղաքական կյանքում որոշումների կայացման գործընթացի համատեքստում, սակայն միջուկային խնդրի պարագայում, անկախ երկրի ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադրության, թե՛ հոգևոր վերահասվը, թե՛ նախագահը և թե՛ տարբեր խմբավորումների ներկայացուցիչներ հանդես էին բերում միասնականություն և արտաքին թշնամուն համատեղ ուժերով դիմագրավելու պատրաստակամություն, հատկապես այն պարագայում, որ միջուկային ծրագրի հետագա ճակատագրի և զարգացման շուրջ Ա. Խամենեին և Մ. Ահմադինեժադը գաղափարակիցներ էին:

Այսպիսով, ամփոփելով իրանական միջուկային ծրագրի ազդեցությունը Մ. Ահմադինեժադի ներքին քաղաքականության վրա, պետք է փաստենք, որ այն յուրահատուկ իրավիճակ ստեղծեց երկրում և նախագահի, հոգևոր առաջնորդի և իրանական քաղաքականության ակտիվ դերակատարների միջև հարաբերություններում: Իրանի միջուկային ծրագիրը մնում էր առեղծված եվրոպական երկրների և ԱՄՆ-ի համար՝ չնայած ֆինանսական և տնտեսական պատժամիջոցներով Իրանի վրա ճնշում գործադրելուն, հնարավոր ռազմական սպառնալիքներին կամ արևմուտքից Իրանի մեկուսացմամբ: 2010 թ. Իրանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները միայն մասամբ տվեցին ցանկալի արդյունքը: Իրանի կառավարությունը, որպեսզի չխորացնի լարված հարաբերությունները միջազգային հանրության հետ, համաձայնեց շարու-

⁸ Շարժման հիմնական պահանջներից էր նախագահական ընտրությունների արդյունքների չեղարկումը և նախագահի պաշտոնից Մ. Ահմադինեժադի հեռացումը:

նակել բանակցությունները միջուկային ծրագրի շուրջ:

Ամփոփելով ԻԻՀ ներքին քաղաքականության և տնտեսության վրա միջուկային ծրագրի հետ կապված պատժամիջոցների ազդեցությունը՝ հանգում ենք հետևյալին.

➤ Մ. Ահմադինեժադի երկրորդ ժամկետի ավարտին տարածաշրջանային լարվածությունը Թեհրանի համար լուրջ քաղաքական, ռազմական, տնտեսական և մասնակի կենցաղային սոցիալ-հոգեբանական խնդիրներ առաջացրեց և սպառնալիք առաջացրեց տարածաշրջանի անվտանգության համակարգի համար:

➤ Մ. Ահմադինեժադի ներքին քաղաքականությունը վատթարացրեց հարաբերությունները նախագահի և գերագույն առաջնորդ Ա. Խամենեյի միջև: Թեև գերագույն առաջնորդը երբեք առանձնակի համակրանք չէր տաժել Արևմուտքի և հատկապես ԱՄՆ-ի նկատմամբ, բայց միշտ զգուշացել էր նրանց հետ հնարավոր ռազմական դիմակայությունից: Բայց Մ. Ահմադինեժադի կոշտ վերաբերմունքը խնդրի նկատմամբ դժվար թե օգներ երկրին խուսափել անդառնալի հետևանքներից:

➤ Քաղաքական խնդիրներին գումարվեց նաև տնտեսական անկումը, որը ԻԻՀ-ի դեմ պատժամիջոցների արդյունք էր: Այս անկումը անհանգստության մեծ ալիք հարուցեց Մ. Ահմադինեժադի և նրա քաղաքականության նկատմամբ ինչպես շարքային իրանցիների, այնպես էլ իրանցի քաղաքական գործիչների շրջանում:

➤ Որպես պատժամիջոցների տնտեսական արդյունք կտրուկ նվազեցին հում նավթի արտահանումը և ներքին արտադրությունը, աճեց գործազրկությունը, արտարժույթի անկում գրանցվեց, աճեցին սպառողական ապրանքների գները:

➤ Իրանի միջուկային խնդիրը որոշ չափով անձնական թշնամանք արտահայտելու միջոց էր: Իրանի միջուկային ծրագրի շրջանակներում խմբակցական տարածայնություններից զատ, իրանական քաղաքական գործիչների համար առիթ էր հանդիսացել արտահայտել իրենց դժգոհությունը նախագահի և իր թիմի վարած քաղաքականության նկատմամբ: Իրանցիները, որոնք աջակցում էին Մ. Ահմադինեժադի քաղաքականությունը միջուկային խնդրի շուրջ գիտակցեցին, որ դրա համար քարձր գին էին վճարում:

➤ Տնտեսական պատժամիջոցները հիմնականում վնասում էր շարքային քաղաքացիներին, քան խախտում էր կառավարության գործունեությունը, քանի

որ իրանական կառավարությունը գոյատևելու ուղիներ գտնում էր, իսկ երկիրը մեկուսացված էր աշխարհից:

➤ ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի կողմից Իրանի նկատմամբ կիրառված տնտեսական, բանկային և ֆինանսական պատժամիջոցները, դիվանագիտական և ռազմական ճնշումները ԻԻՀ-ին ստիպեցին 2013 թ. նստել բանակցությունների սեղանի շուրջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Իսկանդարյան Գ.**, Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի (2006-2007թթ.) ընդունած բանաձևերի շուրջ, Մերձավոր Արևելք, հատոր IV, Երևան, 2007
2. **Иваненко И. В.**, Иран: итоги правления М. Ахмадинежада и проблемы для нового президента, Москва, 2013
3. **Кожанов А.**, Экономические санкции против Ирана: Цели, масштабы, возможные последствия введения, Москва, 2011
4. **Кожанов Н. А.**, О влиянии экономических санкций на внутривосточную ситуацию в Иране, отг. Мамедова Н. М., Санкции и их влияние на Иран, Москва, 2012
5. **Мамедова Н. М.**, Санкционный режим в отношении Исламской Республики Иран и его влияние на ситуацию в стране, отг. Мамедова Н. М., Санкции и их влияние на Иран, Москва, 2012
6. **Машков Н. А.**, Экономическое положение и экономическая политика Ирана в период санкций, отг. Мамедова Н. М., Санкции и их влияние на Иран, Москва, 2012
7. **Bar S.**, Machtiger R., Bachar S., Iranian nuclear decision making under Ahmadinejad, Herzilya conference, 20-23. 01. 2008
8. **Clawson P.**, Much Traction from Measured Steps, The Iranian Opposition, the Nuclear Issue, and the West, Policy Focus #100, The Washington Institute for Near East Policy, USA, 2010
9. **Hassan H. D.**, Iran: Profile of President Mahmoud Ahmadinejad, CRS report for Congress, The Library of Congress, 09. 06. 2008
10. **Hitchcock M.**, The Apocalypse of Ahmadinejad, Multnomah books, Colorado, 2007
11. **International Monetary Fund 2011**, Islamic Republic of Iran: Selected Issues Paper, IMF Country Report №11/242, August, 2011
12. **Jacobson M.**, Sanctions against Iran: A Promising Struggle, by The Center for Strategic and International Studies and the Massachusetts Institute of Technology, The Washington Quarterly, Vol. 31, N 3, Summer, 2008
13. **Mayer Charles C.**, National security to nationalist myth: Why Iran wants nuclear weapons, Thesis, Naval Postgraduate School, Monterey, California, 2004
14. **Palgrave M.**, The Iran threat: President Ahmadinejad and the Coming Nuclear Crisis, Copyright © Jafarzadeh A., St. Martin's Press, LLC, New York, 2007

15. **Peter A. G. van Bergeijk**, Sanctions against Iran-a preliminary economic assessment, ISS Report No. 25
16. **Samore G.**, Sanctions Against Iran: A Guide to Targets, Terms, and Timetables, Belfer Center for Science and International Affairs, Harvard Kennedy School, USA, 2015
17. **Մարտիկանյան Ս.**, Իրանը և պատժամիջոցները, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6780, (հւ. 21.04.2021)
18. Интервью президента Ирана Ахмадинежада "Шпигелю", http://antiglobalism.blogspot.com/2010/06/blog-post_05.html, (հւ. 21.04.2021)
19. **Сажин В. И.**, Иран: ноябрь 2010 г. Военно-политическая ситуация, <http://www.iimes.ru/?p=11942>, (հւ. 21.04.2021)
20. Ahmadinejad: Iranian Nuclear Program Not Slowed, Voice of America, <http://www.voanews.com/english/archive/2007-08/2007-08-28-voa55.cfm?CFID=155081018>, (հւ. 21.04.2021)
21. Definition of Unemployment rate: This entry contains the percent of the labor force that is without jobs. Substantial underemployment might be noted, <https://www.indexmundi.com/g/g.aspx?c=ir&v=74>, (հւ. 21.04.2021)
22. Implementation of the NPT Safeguards Agreement in the Islamic Republic of Iran, <https://www.iaea.org/sites/default/files/gov2006-15.pdf>, (հւ. 21.04.2021)
23. Iran in numbers: How cost of living has soared under sanctions, <https://www.bbc.com/news/world-middle-east-22765716>, (հւ. 21.04.2021)
24. Iran's struggle, the regime tightens its belt and its fist, https://www.economist.com/briefing/2011/01/13/the-regime-tightens-its-belt-and-its-fist?story_id=17900396, (հւ. 21.04.2021)
25. **Kokabisaghi F.**, Assessment of the Effects of Economic Sanctions on Iranians' Right to Health by Using Human Rights Impact Assessment Tool: A Systematic Review, p. 376, http://www.ijhpm.com/article_3454_413e7c40127a45913385d0def29682a6.pdf, (հւ. 21.04.2021)
26. **Milani A.**, Taking Tehran's Temperature: One Year On, panel at the Carnegie Endowment for International Peace, 8 June 2010, <https://carnegieendowment.org/files/0609carnegie-tehran.pdf>, (հւ. 21.04.2021)
27. **Patterson R.**, EU Sanctions on Iran: The European political context, <https://www.mepc.org/eu-sanctions-iran-european-political-context>, (հւ. 21.04.2021)
28. The Ahmadinejad Period (2005–Present), https://www.iranhumanrights.org/2013/04/THE-AHMADINEJAD-PERIOD-2005-PRESENT/#_ftn7, (հւ. 21.04.2021)
29. United Nations Security Council, Resolution 1696 (2006), [https://www.undocs.org/S/RES/1696%20\(2006\)](https://www.undocs.org/S/RES/1696%20(2006)), (հւ. 21.04.2021)
30. United Nations Security Council, Resolution 1737 (2006), [https://www.undocs.org/S/RES/1737%20\(2006\)](https://www.undocs.org/S/RES/1737%20(2006)), (հւ. 21.04.2021)
31. United Nations Security Council, Resolution 1747 (2007), [https://www.undocs.org/S/RES/1747%20\(2007\)](https://www.undocs.org/S/RES/1747%20(2007)), (հւ. 21.04.2021)
32. United Nations Security Council, Resolution 1803 (2008), [https://www.undocs.org/S/RES/1803%20\(2008\)](https://www.undocs.org/S/RES/1803%20(2008)), (հւ. 21.04.2021)
33. United Nations Security Council, Resolution 1835 (2008), https://www.iaea.org/sites/default/files/unsc_res1835-2008.pdf, (հւ. 21.04.2021)
34. United Nations Security Council, Resolution 1929 (2010), [https://www.undocs.org/S/RES/1929%20\(2010\)](https://www.undocs.org/S/RES/1929%20(2010)), (հւ. 21.04.2021)
35. Ġehād-e eqtešādī (Տնտեսական ջիհադ), <http://farsi.khamenei.ir/newspart-index?id=11785&nt=4&year=1390&tid=1690#5171>, (հւ. 21.04.2021)
36. <https://web.archive.org/web/20190703085524/http://www.world-nuclear.org/information-library/country-profiles/countries-g-n/iran.aspx> (հւ. 21.04.2021)
37. <https://pris.iaea.org/PRIS/CountryStatistics/ReactorDetails.aspx?current=1050> (հւ. 21.04.2021)
38. <https://www.rbc.ru/economics/03/04/2018/5ac387ee9a79472a4f288a66> (հւ. 21.04.2021)
39. <https://www.nti.org/analysis/articles/iranian-centrifuge-model-collection/> (հւ. 21.04.2021)
40. http://en.people.cn/200609/09/eng20060909_301143.html (հւ. 21.04.2021)

*Տճանաչւածնախնայելի է՝ 22.04.2021
 Րեւենզիրօւանա/Գրնիխրտնայելի է՝ 28.04.2021
 Քրնյանա/Ընդրտնայելի է՝ 02.05.2021*